

Յունաց Պատրիարքի Այցը Հայոց Պատրիարքարան

19 Նոյեմբեր 2005
Երուսաղէմ

Չորս տարիներէ ի վեր, Յունաց, այսօր հրաժարեալ, Պատրիարք Էրօնիօսի ընտրութենէն օրս, Ս. Յարութեան գերեզմանի շուրջ Հայոց թէ Յունաց իրաւանց տարակարծութեանց գծով լարուածութիւն կը տիրէ զոյգ պատրիարքութեանց միջեւ: Յատկապէս ճրագալոյցի Տօնախմբութեան պահուն Ս. Գերեզմանէն լոյս վերցնելու իրաւունքի հարցը դիւրաւ կարող է վէճէն թէ հրմշտութեն շատ հեռուն անցնիլ:

2005 Տարւոյ ընթացքին Յունաց Պատրիարքարանի վարչական թէ կալուածային առուածախի լուրջ ու դատապարտելի բացթողումները պատճառ դարձան Էրօնիօս Պատրիարքի բռնի հրաժարման կամ հեռացման Ս. Աթոռէն:

Յոյներ, հակառակ Իսրայէլի իշխանութեանց կամքին, որուն անվերապահ հովանաւորութիւնը կը վայելէր Էրօնիօս, անցան նորընտիր Պատրիարքի ընտրութեան եւ Թեօֆիլոս Գ. կոչեցին նորընտիր օրինական գահակալ:

Այսուհանդերձ, նորընտիր Յոյն Պատրիարքի ընտրութեամբ որեւէ նկատառելի բարելաւում չի արձանագրուեցաւ Հայ թէ Յոյն Պատրիարքութեանց յարաբերական գծով, նկատի առնելով որ վէճը թէ կողմերու միջեւ որդեգրուած Բարձր Ատեանի դատական միջոցառումները թե՛ր եւս կը մնան արկախ ու վիճակը ելեկտրականացած:

Արդարեւ, Ուրբաթ, 18 Նոյեմբեր 2005ին, Յունաց Թեօֆիլոս Գ. նորընտիր Պատրիարքը անձամբ պաշտօնապէս ներկայացաւ Հայոց Ս. Յակոբայ մայրավանք ու հիւրը դարձաւ Հայոց Պատրիարք Թորգոմ Արքեպս. Մանուկեանի, որը սիրալիր ընդունեց Յունաց պատուիրակութիւնը:

Յունաց Պատրիարք Հօր երեւումը Հայոց վանքը զանազան հարցականներու թէ մեկնաբանութեանց ատաղձ ծառայեց, որոնց կարգին գլխաւորաբար այն թէ,

նկատի առնելով որ յաջորդ շաբաթուայ ընթացքին, Երեքշաբթի, 22 Նոյեմբեր 2005ին, ներկայութեամբը Յունաստանի նախագահին թէ շարք մը նախարարաց թէ տեղական ու օտար բարձրաստիճան պաշտօնատարներու առաջ, տեղի է ունենալու Յունաց նորընտիր Պատրիարքի օժման թէ գահակալութեան արարողութիւնը,

եւ նկատի առնելով որ այդ արարողութեան Երուսաղէմի երկու (Լատին եւ Հայ) պատրիարքութեանց ներկայութիւնը շատ աւելի փափաքելի է քան պարտ ու պատշաճը եւ կարող է լուրջ (քաղաքական թէ պատմական) յատկանշականութիւն ունենալ մանաւանդ երբ Իսրայէլեան իշխանութիւնները խեթ աչքով է որ կը դիտեն անցուդարձին,

վերջապէս, նկատի առնելով վերոյիշեալ տուեալները, կարելի է կրահել թէ հաւանաբար այս անակնկալ այցը Յունաց Պատրիարքի արժամաբար շրջացնելով Յոյն-Հայ տարակարծութեանց վիճը կը միտեր հաւաստիացնել

կամ ապահովել Հայոց Պատրիարքութեան պաշտօնական ու պատշաճ ներկայութիւնը գահակալական արարողութեան:

Այսուհանդերձ, մենք պիտի ուզէինք այդ այցի մէջ տեսնել փոխադարձ մօտեցման ու փոխ հասկացողութեան անկեղծ գործնական ու արձագանքելի քայլ:

Յ.Գ. Շաբաթ օր (19.11.05) տեղեկացանք թէ Հայոց Պատրիարքութիւնը տրամադրուած է պատշաճ ներկայութեամբ գտնուելու գահակալական արարողութեան: